

Հարգելի հաճախորդ,

Սույնով տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՖԻՆՔԱ» ՈԻՎԿ ՓԲԸ-ն (իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ագաթանգեղոսի 2ա) «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացնում է Ձեր անձնական տվյալների մշակում «ՖԻՆՔԱ» ՈԻՎԿ ՓԲԸ-ի և Ձեր միջև կնքված պայմանագրի կատարման, ինչպես նաև պայմանագրի պայմաններից բխող և «ՖԻՆՔԱ» ՈԻՎԿ ՓԲԸ-ի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործողությունների իրականացման նպատակով:

Անձնական տվյալների հասանելիությունը կամ Անձնական տվյալների մշակումը սահմանափակված կլինի միայն «ՖԻՆՔԱ» ՈԻՎԿ ՓԲԸ-ի կողմից հստակորեն լիազորված անձանց շրջանակով:

«ՖԻՆՔԱ» ՈԻՎԿ ՓԲԸ-ն Ձեր տվյալները մշակելու համար կարող է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, այլ անձանցից ստանալ Ձեզ հետ պայմանագիր կնքելու նպատակով, իր գործողությունների, ինչպես նաև իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ ցանկացած տվյալ: Մշակման ենթակա տվյալների ցանկը ներառում է Ձեր կողմից «ՖԻՆՔԱ» ՈԻՎԿ ՓԲԸ-ին տրամադրված և հանրամատչելի աղբյուրներից ձեռք բերված անձնական տվյալները, ինչպես նաև ԱՔՌԱ Վարկային բյուրոյից, ՀՀ կենտրոնական բանկից, իրավապահ մարմիններից, այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից Ձեր վերաբերյալ «ՖԻՆՔԱ» ՈԻՎԿ ՓԲԸ-ին տրամադրված տվյալները: Ցանկը սահմանափակ չէ, և «ՖԻՆՔԱ» ՈԻՎԿ ՓԲԸ-ն այլ աղբյուրներից ևս կարող է ստանալ Ձեր անձնական տվյալները:

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, ինչպես նաև երրորդ անձանց և «ՖԻՆՔԱ» ՈԻՎԿ ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրերի (աուդիտորական, խորհրդատվական, ծառայությունների մատուցման, ապահովագրության պայմանագրերի կնքման և այլ նպատակներով) համաձայն՝ Ձեր անձնական տվյալները կարող են փոխանցվել երրորդ անձանց կամ վերջիններիս կարող է տրամադրվել հնարավորություն օգտվելու այդ տվյալներից: Անձնական տվյալները մշակվելու են տվյալներ մշակելու նպատակներն իրականացնելու համար օբյեկտիվորեն անհրաժեշտ ժամկետով:

Սույն ծանուցման պաշտոնական հրապարակման պահից Դուք համարվում եք ծանուցված, և այդ պահից սկսած մեկամսյա ժամկետում Ձեր կողմից առարկություն չներկայացնելու դեպքում համարվում է, որ Դուք տվել եք Ձեր համաձայնությունը «ՖԻՆՔԱ» ՈԻՎԿ ՓԲԸ-ին՝ մշակելու Ձեր անձնական տվյալները:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով Դուք ունեք մշակման հետ կապված ցանկացած գործողություն կատարելու վերաբերյալ

տեղեկություններ ստանալու, ինչպես նաև Ձեր կողմից տվյալների ոչնչացման կամ տվյալների մշակման դադարեցման պահանջ ներկայացնելու իրավունք: Ձեր կողմից հայցվող դադարեցման պահանջ ներկայացվում է «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ին գրավոր դիմումի միջոցով, որին ընթացք է տրվում միայն այն դեպքում, երբ դիմումում ներկայացված պահանջը հնարավոր է բավարարել՝ հիմք ընդունելով «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի ներքին իրավական ակտերը և անձնական տվյալների մշակման անհրաժեշտության բացակայությունը:

Սույն ծանուցման վերաբերյալ, ինչպես նաև այլ հարցերի դեպքում կարող եք դիմել «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի ցանկացած մասնաճյուղ: